# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

05.06.2026թ. կնքված թիվ «ՀՓ-ԳՀԾՁԲ-26/37» «Հայփոստ» ՓԲԸ-ի կարիքների համար բեռների փոխադրման ծառայությունների ձեռքբերման մասին պայմանագրում լրացում կատարելու վերաբերյալ

ք. Երևան

06.07.2026թ.

«Հայփոստ» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր գործադիր տնօրեն Շուշան Ալեքսանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ **«Պատվիրատու»**, մի կողմից, և «Փարոս տրանս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գոռ Պետրոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ **«Կատարող»**, մյուս կողմից, միասին հետագայում՝ **«Կողմեր»**, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ, ինչպես նաև Կողմերի միջև կնքված պայմանագրի դրույթներով, կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ **«Լրացուցիչ համաձայնագիր»**) հետևյալի մասին.

## *1. Համաձայնագրի առարկան*

1. Սույնով Կողմերը համաձայնության են գալիս 2026 թվականի հունիսի 5-ին կնքված «ՀՓ-ԳՀԾՁԲ-26/37» թիվ պայմանագրի Հավելված N 1-ով հաստատված «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ում կատարել հետևյալ լրացումը. Հավելված N 1-ի «Տեխնիկական բնութագիր» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր պարբերությամբ.

«Պատվիրատուն իրավունք ունի յուրաքանչյուր պատվերի հաստատման դեպքում Կատարողին տրամադրել կանխավճար՝ Վրաստանի Հանրապետության Թբիլիսիի միջազգային օդանավակայանի բեռնային համալիրում մաքսային միջնորդական ծառայության և մաքսային համալիրի վճարների կատարման նպատակով: Կատարողը պարտավոր է ստացված կանխավճարն օգտագործել բացառապես այն պատվերի շրջանակներում ենթակա մաքսային վճարների վճարման նպատակով, որի համար այն տրամադրվել է, և իրավունք չունի այն օգտագործել այլ նպատակներով:

Տվյալ պատվերի շրջանակներում մաքսային վճարների կատարումից հետո Կատարողը պարտավոր է Պատվիրատուին ներկայացնել մաքսային վճարների կատարումը հավաստող համապատասխան վճարային փաստաթղթերը, ինչպես նաև կատարված մաքսային վճարների վերաբերյալ հաշվետվություն, որը ենթակա է հաստատման Կողմերի կողմից՝ երկկողմ ստորագրմամբ: Մաքսային վճարների վերաբերյալ հաշվետվության արդյունքում, եթե արձանագրվում է տրամադրված կանխավճարի գումարի և տվյալ պատվերի շրջանակներում փաստացի կատարված մաքսային վճարների ընդհանուր գումարի տարբերություն, ապա Կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է հաշվետվության հաստատումից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում փոխհատուցել առաջացած տարբերության, եթե Կողմերի միջև գրավոր համաձայնությամբ այլ կարգ սահմանված չէ:»:

## *2. Այլ պայմաններ*

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ***Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Հայփոստ» ՓԲԸ | «Փարոս տրանս» ՍՊԸ |
| ք.Երևան, Արշակունյանց 65/5 | Շիրակի մարզ, Նահապետավան 11 փ. 7 տ. |
| «Կոնվերսբանկ» ՓԲԸ | «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ |
| ՀՀ 1930003703150100 | ՀՀ 220353332533000 |
| ՀՎՀՀ 02507464 | ՀՎՀՀ 05553954 |
| gnumner@haypost.am | parostrans2023@mail.ru |
| ------------------------------ (ստորագրություն) Կ.Տ. | ------------------------------ (ստորագրություն) Կ.Տ. |